

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խուս-ճապոնական պատերազմը.—Թիւրքիա:

Դաշիչաօն և Խնկօռն գրաւելուց յետոյ դիւրացաւ մարշալ Օյամաի ծրագրի իրագործումը՝ Լեաօնանի մօտ վճռողական ճակատամարտ տալ գեն. Կուրոպատկինին: Դաշիչաօիկոուից յետոյ իրար հետ շաղկապուեցան Օկուի և Նորգուի զօրաբանակները, որոնք Կուրոկիի հետ կազմեցին մի անընդհատաղեղ Լեաօնանի շուրջ. այդ աղեղի կենտրոնում զետեղուած էր Նորգուի զօրաբանակը, հարաւից ունենալով Օկուի զօրաբանակը, որի ծայրը հասնում էր Նիւչժուանին, իսկ հիւսիսից՝ Կուրոկիի դորքը, որի ծայրը յենուում էր Տայցզըխէ գետին: Եթէ ի նկատի ունենանք, որ այդ գետը հոսում է Լեաօնանից հիւսիս և Նիւչժուանը գտնուում է այնտեղ, ուր այդ գետը թափում է Լեաօնի գետի մէջ—մենք կը տեսնենք որ ճապոնական զօրքից կազմած աղեղի ծայրերը հասնում էին Տայցզըխէ յորդառատ գետին և այդ բնական խոչնոտի հետ մի օղակ էր գծուած Լեաօնանի շուրջ: Լեաօնանից դէպի Մուկդեն տանող երկաթուղային գիծն էր միակ ազատ ելքը այդ շրջադիրց: Զբաւականանալով գրանովի ճապոնական բանակների հիւսիսային (Կուրոկի) և հարաւային (Օկու) զօրքերը մասեր էին հանել և դէպի Մուկդեն: Խնկօռն-Նիւչժուանից Լեաօնի ափով դէպի վեր նշանաւոր ուժեր էին տեղափոխուում՝ նպատակ ունենալով Սինմինախնը, որ գտնուում է Մուկդենից դէպի հիւսիս արևմուաք, իսկ Կուրոկին կամուրջներ էր գցուում Տայցզըխէ գետի վրայով և իր ուժերից մաս հանուում դէտի Մինցզինտին, այսինքն դարձեալ Մուկդենի ուղղութեամբ: Բացի այդ ուազմանաւեր էին ուղարկուած Լեաօնի գետով դէպի վեր: Պարզ էր որ Օյաման ձգտում է շրջապատել գեն. Կուրոպատկինին և, եթէ այս վերջինը խուսափի դէպի հիւսիս, կարել նաև Մուկդենը հիւսիսային կողմից:

Յուլիսի 13-ից սկսած ճապոնական զօրքերը անընդհատ սեղմուում էին աղեղը Լեաօնանի շուրջը. 18—20 նորանք գրաւեցին իւշուլին, եանցզին, նայչեն և Սիմուչին: Այնուհետեւ

վճռողական ճակատամարտը անխուսափելի էր. օգոստոսի 12-ից սկսուեց Լեաօնանի գրաւման համար երկու հզօր զօրաբանակ-ների ընդհարումը. երկու կողմից մօտ կէս միլիօն էր մասնակ-ցում և 1300 թնդանօթներ էին գործում Հեռաւոր Արևելքի պատմութեան այսուհետև անմոռանալի դարձնող այդ կրուի մէջ. Ռումները օգ. 14-ից յետ նահանջեցին Անշանչանից, Անպինից Լեանդասանից և ճակատամարտը շարունակուեց Լեաօնանի շուր-ջը: Ճապոնացիները աշխատում էին ջախջախել ոռւսաց զօրքի կենտրոնը և նրա ձախ թեկը շրջապատել. դրա համար Կուրո-կին անցնելով Տայցզըխէ գետի աջ ափը աճապարանքով դի-մում էր դէպի երկաթուղային գիծը: Առաջ բերենք միքանի հեռագիրներ Տոկիօից և Պետերբուրգից, որոնք աղօտ պաղա-փար են տալիս տեղի ունեցած անցքերի մասին.

Տոկիօ (Վոլֆ): Պաշտօնական: Օգոստոս 12, 13 և 14-ին Լեաօնանի մօտ եղած կորհների մասին հաղորդում է. օ-գոստոսի 12-ին առաջին բանակն սկսեց արշաւել թշնամու վրայ, որ ուժեղ դիրք էր բռնել դիք լեռնաշղթայի վրայ Լեաօնանից 23 մղոն հարաւ-արևելքը: Երեկոյեան շատ ուշ, օգոստոսի 12-ին, ճապոնական կենտրոնը կարողացաւ տիրել ոռւսական դիրքերին՝ սուխինի կռուից յետոյ, բայց ոռւսա-կան աջ և ձախ թեկը շարունակում էին յամառ դիմա-դրութիւն ցոյց տալ: Օգոստոսի 13-ին վերսկուեց կա-տաղի կոիւ, բայց ոռւսների դիմադրութիւնը չէր թուլանում: Ուշ երեկոյեան ճապոնական աջ թեկն արիւնահեղ կռուից յետոյ՝ յետ մղեց ոռւսական ձախ թեկը և խլեց 8 ոռւսական թնդա-նօթ: Օգոստոսի 14-ին ճապոնական բոլոր զօրասիւները կըր-կին կռուի մտան: Արևամուտին ոռւսաց բոլոր դիրքերն ընկել էին ճապոնացիների ձեռքը: ճապոնացիները կորցրել էին 2,000 մարդ: Միևնոյն ժամանակը ճապոնական միւս բանակներն ար-շաւում էին Անշանչանի վրայ, որտեղից ոռւսները յետ նահան-ջեցին առանց դիմադրութեան: Ճապոնացիները հալածում էին ոռւսներին, այն ինչ նոյն ժամանակը ճապոնական ուրիշ զօրա-խըմբեր կտրեցին նրանց փախուստի ճանապարհը: Ճապոնա-ցիների ձեռքն անցան 8 թնդանօթ, ուազմամթերքներ և բազմա-թիւ սայլեր:

Պետերբուրգի: Գեներալ-լեյտ. Սախարովի հեռագիրը 1904 թ. օգոստ. 18-ից. «Ներկայ թուին Կուրոկիի զօրամասերն ան-ցան Տայցզըխէ գետի աջ ափը Սական և Կանկուանտուն վայրերը, ուր գետը պտոյտ է անում: Առաւոտեան հինգ ժա-մին մեր խուզարկուները պարզեցին, որ գետով անցել է դի-վիզիան ոտքով: Ճապոնացիները առաջ շարժուեցին երկու

ուղղութեամբ՝ արևմտեան և եանտայեան հանքերի ուղղութեամբ։ Գետն անցնող զօրամասերը կազմեցին ծածկոց, որ թագնում էր մնացած զօրամասերի գետով անցնելը։ Մեր առաջապահ դիրքի վրայ օգոստոսի 18-ին սաստիկ լարուած կոիւ էր շարունակուում երեկոյեան 8 ժամից մինչև գիշերուայ 12 ժամը, երբ կատարեալ լսութիւն տիրեց։ Խնչպէս և երեկուայ թուին, կոիւը մեղ համար կատարելապէս աջող վախճան ունեցաւ, որովհետեւ մենք առանց բացառութեան պահպանեցինք բոլոր մեր առաջապահ դիրքերը։ Առանձնապէս յամառ կոիւ էր մղուում գեներալ-մախօր Կոնդրատովիչի դիվիզիայում։ Ճապոնացիները արձակեցին ահագին քանակութեամբ արտիլերիական ոռումբեր։ Ամբողջ օրը շրապնեների հարուածների տակ ծածկուած մնալով մեր զօրքերը հազուադիւտ յամառութեամբ պաշտպանում էին իրանց յանձնուած դիրքերը։ Նախապատրաստելով յարձակումը արտիլերիական կրակով ճապոնացիները միքանի անգամ գրոն էին տալիս մեր դիրքերի վըրայ։ Մեր ամենաառաջապահ ամրութիւններից միքանիսը յամառ պաշտպանութիւնից յետոյ անցնում էին ճապոնացիների ձեռքը, բայց իրաքանչիւր անգամ մենք նորից տիրում էինք նրանց սուխնների հարուածներով, որի ժամանակ ճապոնացիները թողնում էին բազմաթիւ սպանուածներ։ Սուխններով ընդհարումից յետոյ դիրքերի միքանի հողաբաժինների առջև զօրքերը կարողացան փորել գաօլեանում մեծ թւով փոսեր. տեղտեղ փոսերը լցուած էին մինչև բերանը ճապոնական դիակներով։ Ճաբոնացիների կորուստները պէտք է ահագին լինեն, բայց մեր կորուստներն էլ, որոնք գեռ ի յայտ չեն բերուած մինչև անգամ մօտաւորապէս, նոյնպէս նշանաւոր են։ Վիրաւուուած է գեներալ-մախօր Մրոզովսկիյ. թեթև կերպով վիրաւուուած, բայց մնաց կազմի մէջ, գեներալ-լէյտենանտ բարոն Շտակելբերգ։ Մեր ձեռքն անցաւ ճապոնական զէնքի նշանաւոր քանակութիւն։

Տոկիօ. 20 օգոստոսի։ Պաշտօնապէս Մարշալ Օյաման զեկուցանում է, որ թշնամին անկարող էր դիմանալ ճապոնացիների եռանդուն յարձակման և, օգոստոսի 19-ին յետ քաշուեց դէպի Լեաօեան։ Ճապոնացիների աջ թեր յարձակուած գործեց ոռուսների վրայ օգոստոսի 19-ին կէյինտալի մօտ, 15 մղոն դէպի հիւսիս-արևելք Լեաօեանից։ Ճապոնական կորուստները օգոստոսի 16-ից կազմում են մօտ տասը հազար մարդ, կենտրոնի զօրքի շտարի հրամանատարը Լեաօեանի մօտ հեռագրեց օգոստոսի 20-ին առաւօ-

տեան, որ կենարոնը շարունակում է յարձակումը մէկ գծի վրայ կանգնելու համար ձախ զօրաբաժնի հետ:

«Մինչև օգոստոսի 18-ի երեկոն այստեղ ստացուած գեկուցումների հիման վրայ պաշտօնապէս հաղորդում է հետեւ եալը. Օգոստոսի 14-ից զօրքը շարունակում է յարձակումը Լեաօեանի վրայ. օգոստոսի 16-ին առաւօտեան աշ թեր և առջին զօրաբաժնի միջին զօրասիները գրաւեցին դիրքեր 9 մղոն դէպի հարաւարեւելք Լեաօեանից, Տայցզրիխէ գետի ձախ ափի վրայ. Օգոստոսի 16-ին այդ զօրաբաժնիները յարձակում էին գործում Խայչենեան ճանապարհով Լեաօեանի վրայ առաջին զօրաբաժնի ձախ թեր հետ միասին: Նրանք գրաւեցին դիրքեր ուսւական պաշտպանողական գծի հանդէպ, որը ձգւում էր արևելքից դէպի արևմուտք Լեաօեանից 6 մղոն դէպի հարաւարեւ. Օգոստոսի 17-ին ամբողջ օրը տեղի ունէր կատաղի կոիւ, որը շարունակում էր դեռ օգոստոսի 18-ին ցերեկով: Ռուսները, կարծեմ, ունէին 12-ից մինչև 13 դիվիլիա»:

«Օգոստ. 20 (Ռէյտէր): Լեաօեանի մօտ կոիւը շարունակում էր օգոստոսի 20-ին առաւօտեան: Կուրոպատկինը ուժեղացրեց իր ձախ թեր արևելքից և հիւսիսից, յուսալով կանգնեցնել Կուրոկիի յարձակումը և պաշտպանել նահանջելու համար հաղորդակցութեան ճանապարհութերը: Պաշտպանուող ոյժերի մեծ մասը կենարոնացրած է Զէյեանտայի դիրքում, որ օգ. 19-ի առաւօտեան ենթարկուել էր յարձակման: Կոռուի հետեանըը անյայտ է: Ճապնացիների կորուստները՝ սպանուած և վիրաւոր միասին՝ կազմում են 25,000 հոգի: Կուրոկիի զօրքերը չափազանց յոզնած և ուժասպառ են: Տայցզրիխէ գետը դուրս է եկել ափերից: Կուրոկին հնարաւառութիւն չունի շարունակելու առաջնազարդութիւն դէպի Խէյեանտայ, որտեղից թնդանօթները կարող են իշխել երկաթուղու վրայ. Օգոստոսի 19-ին Լեաօեանի մօտ կոռուի ժամանակ յամառութեամբ պաշտպանում էին դիրքերը, որոնք շատ լաւ պաշտպանուած են զանազան լրացուցիչ ամրութիւններով, իսկ այդ ամրութիւնները դարձնում են այդ դիրքերը համարեա անմատչելի Ռուսները չեն բաւականանում միայն պաշտպանողական դիրք բռնելով. օգոստոսի 17-ին նըրանք քաջաբար յարձակուեցին Օկոլի բանակի աշ բազկի վրայ Սուտանի մօտ: Յարձակումը յետ մղուեց մեծ կորուստներով: Օգոստոսի 21-ին ճապնական I բանակի գլխաւոր բանակատեղից հաղորդում են, որ ճապոնական զօրքերը դիրք են բըռնել Լեաօեանի առաջը. հիւսիսարեւելքում և հարաւարեւելքում տեղի է ունենում թնդանօթային սաստիկ կոիւ քաղաքը».

և գետի վրայ եղած մթերանոցներն այրւում են: Թաղաքի միւս կողմում, երկում են դէպի հիւսիս ուղերուող գնացքներ: Ռուսաներն իրանց ձեռում են պահում այն ճանապարհները, որոնք տանում են դէպի գետը, նոյնպէս և երկաթուղու գիծը: Թշնամին մեծամեծ ոյժեր ունի. տեղի է ունենում յուսահատական կոփւ. տեսարանը հրաշալի է»:

Գեներալ Կուրոպատկին կանխատեսնելով հիւսիսից կտըրուելու վտանգը մեծ ջանք էր գործ զնում կանգնեցնելու Կուրոկիի առաջխաղացումը դէպի երկաթուղու գիծը, Տայցզրիխէի աջ ափով:

Օգոստոսի 20-ին, գեներ. Սախարովի խփած հեռագրից իմանում ենք որ գեներ. Օրլովը, որին յանձնուած էր ճապոնական զօրքի այդ մասի դէմ գործելը, վիրաւորուելով ստիպուած էր յետ նահանջել: Օգնութեան հասան սիրիբեան առաջին կորպուսի զնդերը գեն. Շտակելրեգի հրամանատարութեամբ: Այսուհետեւ գործերի գրութեան մասին որոշ տեղեկութիւն է տալիս գեն. Կուրոպատկինի հեռագիրը օգոստոսի 21-ից, «Գիշերը լոյս այօր թշնամին յարձակում վերսկսեց և գրաւեց մեր բանած գիրքերի մեծ մասը: Այդ գիրքերը բռնող մեր գորքերը յետ նահանջեցին դէպի վերջապահ դիրքը Սըկվանտունի մօտ, Զխանստան-Շիչենգը գիւղերի գծի վրայ, Լեաօեանի Սըկվանտունի տարածութեան կիսում: Գիշերը լոյս այսօր առաջին սիրիբեան կորպուսը, վերջին 5 օրում ծանր կորուսաներ կրելով և գերազանց ուժերի շրջապատուելուց վտանգուած, յետ նահանջեց մի քանի վերստ արևմտեան ուղղութեամբ: Այդ պայմաններում ես հրամայեցի մաքրել Լեաօեանը և հեռանալ դէպի հիւսիս»:

Տօկի (Ռէյտէր). օգոստոսի 22-ին ճապոնացիները գրաւեցին Լեաօեան, առաւօտեան ժամի 9-ին:

Ծովային բեմի վրայ և անցած ամսում տեղի ունեցան նշանաւոր փոփոխութիւններ: Պորտ-Արտուրի պաշարումը ֆամաքի կողմից օրէցօր սերտ էր դառնում, ճապոնացիները մէկը միւսի յետնից գրաւում էին շրջապատող բլուրներն ու ամրութիւնները: Սակայն դեռ մինչև յուլիսի 23-ը Պորտ-Արտուրը հարաւորութիւն ունէր, թէև մեծ դժուարութիւններով, պահանել իր կապը ուսւաց ցամաքային զօրքի հետ. այդ երկում է նրանից որ Լեյտենանտ Եյրակով ականանաւը Նիւչժուանից կարողացաւ վերադառնալ իր մեկնած տեղը, Պորտ-Արտուրը: Դրանից միքանի օր առաջ, յուլիսի 19-ին, ուսւաց նաւատորմը դուրս եկաւ, նաւահանգստից և կրկին վերադարձաւ իր տեղը: Սա-

կայն յուլիսի 27-ից յետոյ, երբ ճապոնացիները գրաւեցին մի քանի ամրութիւններ, աւելի ևս վտանգաւոր դարձաւ ոռուսաց նաւատորմի դրութիւնը ներքին նաւահանգիստներում, որովհետև տիրելով դրսի ամրութիւններին յուլիսի 25-ից ըսկած գեներալ Նոգին չորս օր անընդհատ ումբակոծում էր ոռուսաց նաւատորմը ցամաքից և նոյն օրերի ընթացքում ծովի կողմից էլ Տոկոն էր ուբակոծում Պորտ-Արտուրը կէտ նպատակ դրած նաւահանգիստը: Թէ որքան առատ էր թափուող ոռումբերի քանակութիւնը այդ երեսում է նրանից որ միայն Բերվաթաթիւն կազաւ 17 հատ:

Այդ պայմաններում կոնտր-ադմիրալ Վիտգեֆտին այլ ելք չէր մնում քան դուրս գալ ծովը և ճեղքելով Տոգօի ռազմանաւերի շարքը սլանալ դէպի Վլադիվոստոկ ու միանալ այնտեղից նրան ընդ առաջ լողացող յածանաւերի հետ: Ռուսաց նաւատորմը փորձեց իրավործել այդ խիզախ ծրագիրը. յուլիսի 28-ին առաւօտեան ժամը 7-ին նա դուրս եկաւ ունենալով իր կազմի մէջ 16 նաւ. 6 զրահակիր, 4 յածանաւ, 5 ականանաւ և 1 հիւանդանոցանաւ (Մոնցոլիա):

Պորտ-Արտուրի նաւահանգստում մնացին վնասուած Բայան՝ յածանաւը, բոլոր թնդանօթանաւերը (կահոներկ) և ականանաւերի մեծ մասը, որոնք փոքրիշատէ վնասուած լինելով՝ անկարող էին անցնել Արտուրի և Վլադիվոստոկի մէջ ընկած մօտ 1100 մղոն տարածութիւնը:

Ռուսաց նաւատորմի դուրս գալու ըովէին հորիզոնի վրայ երեսում էին ճապոնական 11 յածանաւ և 17 ականանաւ, որոնք գնացին միանալու Տոգօի նաւատորմի մնացած մասի հետ: Ռուսաց նաւատորմը բռնեց հարաւային ուղղութիւն: Խուան-չինստաօ կղզուց 10 մղոն դէպի արևմուտք կէսօրին վրայ հասաւ Տոգօն և շրջապատեց ոռուսաց տորմիղը: Կոնտր-ադմիրալ Վիտգեֆտին աջողուեց ճեղքել ճապոնական նաւերի գիծը և սլանալ Շանտունգ հրուանդանի ուղղութեամբ: Հալածելով վախչողներին՝ չորս ժամից յետոյ վրայ հասաւ Տոգօն, և սկսուեց ծովային ահեղ ճակատամարտը Շանտունգի հրուանդանից 20 մղոն դէպի հիւախ: Ճապոնացիները իրանց կրակը կենտրոնացրին Ալեքսանդր Վելիչուած կամաց վրայ, որի վրայ բարձրացած էր Վիտգեֆտի դրօշակը: Մանր վնասուեց այդ զրահակիրը և նրա վրայ հերոսական մահով պսակեց իր կեանքը պորտ-արտուրեան նաւատորմի առաջնորդը: Նրա տեղը զրաւեց իշխան Ալխտումսկիյ: Գիշերային մութը օգնեց ոռուսներին. նաւատորմի մի մասը ցըռւեց դէսուդէն, իսկ մեծ մասը վերադարձաւ Պորտ-Արտուր:

Ալեքսանդր Վելիչուած կամաց վրայ հերոսական

ւերի հետ, ապաստան գտաւ. Կիաօ-չաօի ծոցում գերմանական ծզան-տառ նաւահանգստում, Խօնիկէ-ը գնաց դէպի Վլադի-վոստոկ՝ կտրելով Խաղաղ Ովկիանոսի ջրերը, Քնչառելենի ականանաւը ապաստան գտաւ Զիֆուռում, և ընկաւ ճապոնացի-ների ձեռքը, Ասկոլդէ-ը և Գրոզով ականանաւը հասան Շան-խայ, Եյրհան ճակատամարտի տեղում պայթեցրուեց իր նաւաս-տիների կողմից, Դիան օգոստոսի 8-ին հասաւ Սայցոն:

Սյսպէս ուրեմն միայն Խօնիկէ-ին աջողուեց մասամբ իրա-գործել կ.-աղմ. Վլադիվոտի ծրագիրը. մասամբ ենք ասում, որով-հետև նրան թէկ աջողուեց հասնել Սախալինի ափերին, սակայն Կորսակովեան պահակատեղի մօտ, Անիվա ծոցում ճապոնական Տsuchima և Chitose նաւերը վրայ հասան և տեղնուտեղը կործանեցին նրան:

Նոյնպէս անաջող էր Վլադիվոտոկեան նաւատորմի փոր-ձը՝ միանալ Պորտ-Արտուրեան էսկադրայի հետ: Օգոստոսի 1-ին Վլադիվոտոկեան նաւատորմը տաք կոիւ ունեցաւ Կամիմու-րայի նաւատորմի հետ Կորէեան նեղուցում, Ֆուզանի մօտ: Ռուսաց յածանաւերից Քյորիկէ-ը այնքան վնասուեց այդ կըու-տում որ անկարող եղաւ շարունակել նահանջը և տեղնուտեղը ջրասուլուեց: Ծովակալ Բեղորձագովը վնասուած Գրոմօօյ-ի և Ռուսիա-ի հետ կարողացաւ խոյս տալ Կամիմուրայից և հաս-նել Վլադիվոտոկի:

Յուլիսի 28-ին և օգոստոսի 1-ին տեղի ունեցած ծովային ճակամարտերի հետևանքը այն է, որ ոռուսաց նաւատորմը Խաղաղ Ովկիանոսում այլևս անկարող է դեր կատարել, մինչև որ օգնութեան չհասնի Բալտիկեան էսկադրան:

Մերձաւոր Արևելքում անցքերը այնպիսի արագութեամբ չեն հետևում իրար, ինչպէս Հեռաւոր Արևելքում:

Հեռագիրը հաղորդեց որ նախագահ Լիւրէն յուլիսի 16-ին ընդունել է հայոց կաթողիկոսի կողմից ուղարկուած պատուի-րակութիւնը, որ դարձրել է Փրանսիական հանրապետութեան նախագահի ուշադրութիւնը հայ ազգարնակութեան վիճակի վրայ թիւրքիայում. պատուիրակութիւնը կազմուած է Սարա-ճեան և Այլաւեան արքեպիսկոպոսներից: Լրագրները հաղոր-դում են որ վեհափառ կաթողիկոսը պատուիրել է յիշեալ եկե-ղեցականներին այցելել նաև Լոնդոնի, Վիեննայի, Բերլինի, Հռոմի և Պալաշինգտոնի արքունիքները և ինքը աղերսագրով դիմել է ոռուսաց Կայսրին, ինդրելով թեթևացնել թիւրքահայե-րի անտանելի վիճակը: Առայժմ եւրոպական դիպումատիան դեռ ևս ոչ մի վճռական քայլ չէ արել թիւրքահայերի դրութիւնը

բարուրքելու գործում. Թիւրքիան շարունակում է կոտորել հայերին. Բիթլիսում և Մուշում հրդեհուած և կողոպտուած են հայերի տներն ու խանութները, գաւառներում շարունակուում է ջարովը. Պոլառում բանտարկուեցին 400 հոգի. բանտարկութիւններ են տեղի ունեցել Տրավիզոն, Կարին, Վան և այլ տեղերում. Այդ պայմաններում մարդ չի կարող արդարացի չգտնել գերմանական մի թերթի հետևեալ պեսսիմիստական խորհրդածութիւնները.

Berliner Tageblatt իր առաջնորդող յօդուածում ասում է. «Դատելով նախընթաց տարիների փորձով երոպական դիպլոմատիան որոշել է հայերին թողնել իրանց ճակատագրին. Եթէ Հայաստանում կատարուած խժդժութիւնների հարիւրիրորդ մասը կատարուէր մի երկրում, ուր գոյութիւն ունեն երոպական շահեր, վազուց ամեն բան կարգի բերուած կը լինէր, իսկ այստեղ, ուր չկան երոպական շահեր, դիպլոմատիայի խիզճը շատ առաձգական է»:

I. II.

Օդ. 23